

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ  
ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ  
Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԱԿՏԻՎ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ  
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ**

**ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ, ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ**

**ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՁԻ ՄԻՋՈՑՈՎ**

**Հեղինակ**

**Երևանի Վ.Համբարձումյանի անվան թիվ 12  
հիմնական**

**Գ.Աբգարյան**

**դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի՝**

**Ղեկավար**

**Ա. Խաչատրյան**

# Երևան 2022

## Բովանդակություն

Ներածություն.....	2
ԱԿՏԻՎ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ, ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՁԻ ՄԻՋՈՑՈՎ	
1. 1 Ուսուցման մեթոդներ.....	3
1. 2 Ինտերակտիվ մեթոդների կիրառումը Հարավային Ամերիկա դասընթացին ...7	
1. 3 Համեմատական գիտափորձ.....	12
	Եզրակացություն
.....	14
	Օգտագործված
գրականություն.....	15

## **Ներածություն**

**Թեմայի արդիականությունը:** Դասավանդման ճիշտ և գործուն մեթոդիկա մշակելիս, պետք է հաշվի առնվեն թե՛ թեմայի բուն էությունը, թե՛ նրա համապատասխանությունը արդի ժամանակին: Պետք է գտնել այն եզրերը, որոնք տվյալ նյութն ու թեման կապում են ժամանակի կյանքին, նրա պահանջներին ու ձեռքբերումներին, աշակերտների հետաքրքրությունների ոլորտին և մտահորիզոնին, նրանց տարիքային առանձնահատկություններին ու կարողություններին: Մանկավարժության ճիշտ սկզբունքների կիրառման տեսանկյունից անկարելի է նյութը աշակերտներին ներկայացնել սխեմատիկ ստանդարտի բերած: Պետք է կիրառվեն այնպիսի մեթոդներ, որ աշակերտներն իրենք ցանկություն ու հետաքրքրություն հանդես բերեն դասի ուսումնասիրության հարցում, կապվի տվյալ թեման նրանց մտածելակերպի յուրահատկությունների կամ ընդհանուր մտահորիզոնի հետ: Ճատ կարևոր է, որ աշակերտն ըմբռնի, որ աշխարհագրությունը ոչ թե խրթին սահմանումների մի անհասկանալի համակարգ է, այլ՝ վերջնական կետում կյանքի, աշխարհի բնութագիրն է: Երբ աշակերտը զգա և գիտակցի թեմայի արդիականությունը ու նրա կապը աշխարհի հետ, ուսուցումն էլ ավելի արդյունավետ կկազմակերպվի:

**Չեռագոտության նպատակն է** հիմնավորել, մշակել և գործնականում կիրառել ավանդական և ոչ ավանդական մեթոդների զուգակցմամբ «Չարավային Ամերիկա» թեմայի ուսուցման մեթոդիկան:

**Չեռագոտության առարկան է** «Չարավային Ամերիկա» թեման ընդգրկող դասընթացների դասավանդման գործընթացը:

**Ջետազոտության խնդիրն է** բացահայտել մանկավարժական այն պայմաններն ու միջոցները, որոնց առկայությունը կնպաստի 6-րդ դասարանցիների կողմից «Ջարավային Ամերիկա» թեմայի ընկալմանն ու ուսուցմանը:

**Ջետազոտության վարկածը** «Ջարավային Ամերիկա» թեմայի դասավանդումը կլինի նպատակային և արդյունավետ, եթե 6-րդ դասարանցիների մոտ ավանդական և ինտերակտիվ մեթոդների զուգակցմամբ ուսումնասիրվի դասընթացները:

Ջետազոտության արդյունքները փորձաքննության են անցել Արամ Մանուկյանի անվան մարզառագմական մասնագիտացված դպրոցում և ստացել իրենց հավաստիությունը **համեմատական գիտափորձի** միջոցով:

**Ջետազոտության հիմնական մեթոդները** ավանդական մեթոդներից օգտվել ենք

պատմելու, գրույցի մեթոդից, ոչ ավանդական մեթոդներից **Գուս-ի աղյուսակ Վենի դիագրամ, Խճանկար «Շրջագայությունն պատկերասրահում» ,Պրիզմա** մեթոդներից:

## **ԱԿՏԻՎ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**

### **ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ**

### **ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ, ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ**

### **ԿԻՐԱՌՄԱՆ**


### **ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՁԻ ՄԻՋՈՑՈՎ**

## **1. 1 Ուսուցման մեթոդները**

Ուսուցման մեթոդն ուսուցման գործընթացում ուսուցչի և սովորողների միջև փոխազդեցությունն արտացոլող մոտեցումների և հնարների համախումբ է: Ժամանակակից պատկերացումների համաձայն՝ ուսուցման պրոցեսը դիտվում է որպես ուսուցչի և աշակերտների միջև փոխազդեցության մի պրոցես, որի նպատակն է սովորողներին հաղորդակից դարձնել որոշակի գիտելիքների, կարողությունների հմտությունների և արժեքների: Ուսուցման գոյության սկզբից մինչև մեր օրերը ձևավորվել, հաստատվել և լայն տարածում են ստացել ուսուցչի և սովորողների փոխազդեցության երեք ձևեր:


1. Պասիվ մեթոդներ
2. Ակտիվ մեթոդներ
3. Փոխներգործուն մեթոդներ

Պասիվ մեթոդը (գծապատկեր 1.) սովորողների և ուսուցչի փոխազդեցության մի ձև է, որում ուսուցիչը դասի ընթացքի հիմնական գործող անձն ու կառավարողն է, մինչ սովորողներն ուսուցչի հրահանգներին ենթակա պասիվ ունկնդիրներ են:



**Պասիվ** դասարանում ուսուցչի և սովորողների միջև կապն իրականացվում է հարցումների, ինքնուրույն և սահմանափակ աշխատանքների, թեստերի միջոցով: Արդի մանկավարժական տեխնոլոգիաների և սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման արդյունավետության տեսանկյունից պասիվ մեթոդը համարվում է ամենաարդյունավետը: Չնայած դրան՝ մեթոդն ունի նաև որոշ դրական կողմեր. ուսուցիչը հեշտությամբ պատրաստվում է դասին, դասի սահմանափակ ժամանակային պայմաններում նա հնարավորություն է ստանում համեմատաբար մեծ ծավալի նյութ մատուցել սովորողներին:

**Ակտիվ** մեթոդը (գծապատկեր 2.) ուսուցչի և սովորողների փոխազդեցության մի ձև է, որի դեպքում ուսուցիչն ու սովորողները փոխազդում են միմյանց հետ և աշակերտներն այստեղ ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ ուսուցման պրոցեսի ակտիվ մասնակիցներ



Եթե պասիվ պրոցեսում հիմնական գործող անձն ուսուցիչն է, ապա այստեղ թե՛ թե՛ սովորողները ակունքներ ունեն: Եթե պասիվ ենթադրում են փոխազդեցության առավելապես ավտորիտատ ոճը, ապա ակտիվ մեթոդներում ակունքավարական ոճն է: Ծառերը ակտիվ և փոխներգործուն մեթոդների միջև հավասարության նշան են դնում, սակայն, չնայած իրենց ընդհանրություններին, նրանք տարբերվում են:


**Փոխներգործուն** կամ ինտերակտիվ (inter-փոխադարձ, act-ազդել, ներգործել) լինել նշանակում է փոխազդել, գտնվել մեկի հետ գրույցի, երկխոսության վիճակում: Այլ խոսքով, ի տարբերություն ակտիվ մեթոդների, փոխներգործուն մեթոդները ենթադրում են աշակերտների ավելի ընդգրկուն փոխազդեցություն ոչ միայն ուսուցչի, այլ նաև միմյանց հետ, ինչպես նաև ուսուցման պրոցեսում սովորողների ակտիվության գերակայություն: Փոխներգործուն դասերում ուսուցչի դերը հանգում է դասի նպատակների նվաճմանը սովորողների գործունեության ուղղորդելուն: Նա մշակում է նաև դասի պլանը (որպես կանոն, դրանք

փոխներգործուն վարժություններ ու առաջադրանքներ են, որոնց կատարումը նպաստում է ուսումնական նյութի յուրացմանը:

Չետևաբար, փոխներգործուն դասերի հիմնական բաղադրատարրերը սովորողների կողմից կատարվող փոխներգործուն վարժություններն ու առաջադրանքներն են: Փոխներգործուն վարժությունների ու առաջադրանքների էական տարբերությունը սովորական առաջադրանքներից այն է, որ, կատարելով դրանք, աշակերտները ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում են ուսումնասիրված ուսումնական նյութը, որքան ուսումնասիրում են նոր նյութ: Դասավանդման ինտերակտիվ մեթոդով անցկացնող դասավանդողը կենտրոնական դեմքից դառնում է ուղղություն ցույց տվողի: Նրա նպատակն է դասարանում ստեղծել սովորողների համար առավել նպաստավոր փոխադարձ վստահության մթնոլորտ, անմիջական, անբռնազբոս, ինքնավստահ, գիտակ, նրբանկատ, խրախուսող, ոգևորող ուսուցիչը նպաստում է աշակերտների խանդավառ, անկաշկանդ լինելուն՝ ապահովելով ակտիվ ներգրավվումը: Սովորողների յուրացումը խթանելու համար հարկավոր է.

- Ապահովել, որպեսզի աշակերտներն իրենց զգան ներգրավված, կարևորված, որը նրանց կտա շարժառիթ,
- Օգնել, գիտակցել ուսուցանվող նյութի կարևորությունը: Նրանք պետք է հավատան, որ դրանք իրենց պետք են,
- Չարգել և խրախուսել աշակերտների անհատականությունը,
- Նոր նյութ մատուցելիս ապահովել շարունակությունը՝ կապելով յուրացվածներին:

գծապատկեր 3.



Փոխներգործուն դասերի հիմնական բաղադրատարրերը սովորողների կողմից կատարվող փոխներգործուն վարժություններն և առաջադրանքներն են: Փոխներգործուն վարժությունների և առաջադրանքների էական տարբերությունը սովորական առաջադրանքներից այն է, որ, կատարելով դրանք, աշակերտները ոչ

միայն և ոչ այնքան ամրապնդում են ուսումնասիրած ուսումնական նյութը, որքան ուսումնասիրում են նոր նյութ:


Չետագոտական աշխատանքում ներկայացվում են ուսուցման արդյունավետության բարձրացման նոր մոտեցումներն ու մեթոդները տարբեր դասարաններում:

Աշխարհագրության ուսուցման գործընթացում մեծ դեր ունեն ժամանակակից ուսուցման ձևերը, որոնք նպաստում են սովորողների մտավոր ունակությունների ակտիվացմանն ու զարգացմանը: Ուսուցման ավանդական մեթոդներից ինտերակտիվ մեթոդների անցման անձնական փորձի վերլուծության հիման վրա դեռևս ուսուցման ժամանակակից փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդներ և եղանակներ՝ նպատակ ունենալով բարձրացնելու ուսուցանվող նյութի յուրացման արդյունավետությունը և զանազան հնարներ կիրառելու հնարավորությունն ընձեռնելով: Արդի պայմաններում ժամանակակից սերունդ կրթելու համար մեթոդական այս նորարարությունները պարտադիր են: Այն նպաստում է սովորողի ինքնուրույն մտածելու, ստեղծագործելու զարգացմանը: Երեխաների կարողությունների և հմտությունների ձևավորման համար կարևոր նշանակություն ունի դասավանդման ընթացքում մեթոդների ճիշտ ընտրությունը: Աշակերտն այսօր կարևորում է ուսուցչի կողմից իրեն գիտելիք հաղորդելու ձևը:

«Այս առումով էլ անհրաժեշտ է, որ աշխարհագրության ուսուցիչը յուրաքանչյուր դասին պատրաստվի հանգամանորեն, որովհետև աշակերտի կողմից ծրագրային նյութի յուրացումը զգալի չափով պայմանավորված է այդ նյութը հաղորդողի որակից: Աշխարհագրության դասերի հաջողությունը մեծապես կախված է նրա կահավորումից, որի վրա ուսուցիչը պետք է աշխատի օրեր ու ամիսներ առաջ: Դրանք ոչ միայն քարտեզներ են, այլ նաև բազմաթիվ ու բազմաբնույթ ցուցադրական նյութեր : Սովորողների կարողությունների և հմտությունների ձևավորման համար կարևոր նշանակություն ունի դասավանդման ընթացքում համապատասխան մեթոդների ընտրությունը: Ուսման նկատմանը հետաքրքրությունը մասամբ կարելի է լրացնել նաև հետաքրքրաշարժ ուսումնական նյութի օգտագործմամբ, քանի որ դա նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը:

## 1.2 Ինտերակտիվ մեթոդների կիրառումը «Ջարավային Ամերիկա» դասընթացին

Գիտամանկավարժական փորձը իրականացվել է Արամ Մանուկյանի մարզառագմական մասնագիտացված դպրոցի 6ա և 6բ դասարաններում: Դասավանդելիս կօգտվենք ինտերակտիվ մեթոդներից: 6 բ դասարան- 16 աշակերտ : Դասը վարվել է նոր մեթոդով: Կիրառվել է **Մտագրոհ, Գուս-ի աղյուսակ ,Խճանկար** մեթոդները: Դասի թեման է Ջարավային Ամերիկա, աշխարհագրական դիրքը, ափագիծը, մակերևույթը»:





Նախօրոք գրատախտակին գրվել է դասի ուսումնասիրության համար առանձնացված կետերը հետևյալ սխեմայով: Դասի առաջին փուլը «խթանումն» է: Այս փուլի ընթացքում իրականացվել է աշակերտների ակտիվացում՝ թեմայի մասին ունեցած տեղեկատվությունը վերհիշելու միջոցով: Սա սովորողներին ստիպում է քննության ենթարկել սեփական գիտելիքները և միևնույն ժամանակ խորհել բուն թեմայի մասին: Մտագրոհի արդյունքում պարզվել է աշակերտների գիտելիքների պաշարը Ամերիկա աշխարհամասի հայտնագործման, Ֆ.Մագելանի կողմից Հարավային Ամերիկան հարավից շրջանցելու պատմության մասին: Քարտեզի վրա ցույց են տրվել ուսումնասիրվող մայրցամաքի խոշոր նեղուցները, դաշտավայրերը, սարահարթերը, լեռները՝ ասելով դրանց անվանումները, իսկ աշակերտները, փորձելով մտապահել դժվարին անունները, ուսուցչի հետ միասին բարձրաձայն արտաբերել են դրանք և մակագրել ուրվագծային քարտեզի վրա: Դասի հաջորդ փուլը իմաստի ընկալումն է: Ինչպես վերը նշվեց, ընտրվել է «խճանկար» մեթոդը: Ըստ այդ մեթոդի՝ դասարանը բաժանվել է 4 խմբերի: Օրինակ՝ խմբերի 1 համարները հավաքվել են մեկ սեղանի շուրջը, 2-ները, 3-ները, 4-ները՝ այլ սեղանների շուրջը: Նախ դասարանին հաճնարարվել է կարդալ դասանյութը: Այնուհետև խմբերին բաժանվել են թերթիկներ, որոնց վրա գրված էին, թե տվյալ խումբը հարցի ո՞ր կողմը պետք է ներկայացնի: Խմբի յուրաքանչյուր անդամ ընտրվել է որևէ ենթաթեմայի փորձագետ, որը մյուս խմբերի անդամներին սովորեցնելու է իր ենթաթեման: Տրվել է 15 րոպե ժամանակ: Ավարտելուց հետո ամփոփվել են արդյունքները:

1-ին խումբը

- ♣ Աշխարհագրական դիրքը
- ♣ Հարավային Ամերիկայի տարածքը, ծայրակետերը
- ♣ Աֆրիկայի և Հվ. Ամերիկայի աշխարհագրական դիրքի տարբերությունները

2 –րդ խումբը

- ♣ Ափագիծը
- ♣ Ափերի զծագրությունը
- ♣ Ափերը ողողող օվկիանոսները

3-րդ խումբը

- ♣ Մակերևույթը
- ♣ Լեռնային արևմուտք

♣ Չարթավայրային արևելք 4-րդ խումբը

♣ Երկրաչառիները

♣ Գործող հրաբուխները Անդերում:

Յուրաքանչյուր խումբ ներկայացրել է իր աշխատանքը: Օրինակ՝ առաջին խումբը վերլուծել է Յվ. Ամերիկայի աշխարհագրական դիրքը, նշել է տարածքը, ծայրակետերը և համեմատել Աֆրիկայի աշխարհագրական դիրքի հետ: Այնուհետև բոլոր խմբերը ներկայացրել են իրենց աշխատանքները: Անհասկանալի հարցերին տրվել են պարզաբանումներ: Յուրաքանչյուր փորձագետ խմբի մյուս անդամներին փորձել է սովորեցնել իր ենթաթեման: Հետո նրանք, խմբում համագործակցելով, կարողացել են աշխատել ուրվագծային քարտեզի վրա: Մեթոդի օգտակարությունը պարզվել է կշռադատման փուլում: Արդյունքն ակնհայտ է դարձել, երբ կիրառվել է ԳՈՒՍ-ի մեթոդը: Այս գրավոր աշխատանքը հանձնարարվել է ամբողջ դասարանին՝ ստորև տրված աղյուսակի հարցադրումները լրացնելու համար:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի
-------	------------------	----------

Տրվեց 5 թույլ ժամանակ: Ավարտելուց հետո ամփոփվել են արդյունքները: Ընթացքում ստուգվել և գնահատվել են 8 աշակերտների ուրվագծային քարտեզի աշխատանքները և ԳՈՒՍ աղյուսակի լրացված հարցադրումները: Արդյունքում պարզվել է, որ աշակերտները լավ յուրացրել էին նոր դասը:


«Չարթավայրի Ամերիկայի բնական զոնաները» դասավանդելիս կօգտվենք

**Պրիզմա, Շրջագայությունն պատկերասրահում և Վեկի դիագրամ** մեթոդներից:

**Պրիզմայի** մեթոդն ուսուցման և ուսումնառության ակտիվ մեթոդ է: Պրիզմայի մեթոդը կիրառվում է բացառապես դասի սկզբնական , խթանման փուլում ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը, ակտիվացնելով և կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների ,ինչպես նաև ուսուցանվող նոր նյութի միջև: Սրանով իսկ մեթոդի կիրառումն ապահովում է դասի հաջող մեկնարկը: Մեթոդն արդյունավետ

Է այն դեպքերում , երբ պահանջվում են կարճ, համառոտ բառերի, հատկանիշների , ցուցանիշների թվարկումներ: Հնարը ենթադրում է արագություն, ուշադրության կենտրոնացում և մասնակիցների իրար հաջորդող ու համաձայնեցված գործողություններ: Այս դասի սկզբում ուսումնական նյութի վրա սովորողների կենտրոնացումն ապահովելու համար ուսուցիչը գրատախտակին կազմված **Պրիզմայի** սկզբում գրում է դասի հիմնական բովանդակությանը վերաբերող սկզբնաբառ (տվյալ դեպքում ,օրինակ Սավանաների զոնա) և վերջում (Չոնայի պահպանություն): Կարելի է օգտագործել նաև (Հասարակածային մշտականաչ խոնավ անտառներ ) և (Անտառների կրճատում ) սկզբնաբառը և վերջնաբառը:

Այնուհետև հանձնարարվում է աշակերտներին լրացնել այն համապատասխան գաղափարներով բխեցնելով դրանք սկզբնաբառից, միաժամանակ խմբավորելով ընդհանուր հասկացությունների, երևույթների ու օբյեկտների անվանումներով:




«Շրջագայություն պատկերասրահում» մեթոդը «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել

գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Դասարանը բաժանվում է 4 հոգուց բաղկացած խմբերի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է 1 բնական զոնա ուսումնասիրել և ստեղծել աղյուսակ, նկար, դիագրամ և այլն: Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին կամ գրատախտակին ստեղծելով պատկերասրահ: Յուրաքանչյուր խումբ մանրամասն ներկայացնում է իր աշխատանքը : Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին: Շրջագայությունից հետո խմբերի աշխատանքները նորից քննության են ենթարկվում այս անգամ արդեն համեմատելով և վերլուծելով առաջացած հարցերը:

Չարավային Ամերիկայի բնական զոնաները անցնելիս ,որպեսզի սովորողներն ավելի լավ տարբերակեն բնական զոնաները կարելի է օգտվել Վենի դիագրամից համեմատելով Չարավային Ամերիկայի և Աֆրիկայի հասարակածային խոնավ անտառների , սավանաների ու նոսրանտառների զոնաները:


Վենի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Վենի դիագրամը կարող է ունենալ ինչպես պարզ, այնպես էլ բարդ կառուցվածք: Տարբեր հասկացությունների այսպիսի վերլուծության , համեմատելու հնարավորություն է ընձեռում առավել հստակ պատկերացնել ընդհանուր և տարբերակող հատկությունները: Սա անհատապես կամ խմբով կատարվող վարժություն է, որը տեղեկատվության մեծ և մանրամասն պաշար չի պարունակում, չնայած կարևոր է նշել այն հանգամանքը ,որ ընդհանրություններն ու առանձնահատկությունները նշելիս աշակերտներից պահանջվում է ընդգրկուն ձևակերպումներ գրառել:



### **1. 3 Համեմատական գիտափորձ**

Մանկավարժական հետազոտություններում առավել տարածված է համեմատական գիտափորձը կամ ստուգողական դասարանների մեթոդը, որի ժամանակ մի դասարանի ուսուցումը տարվում է նոր գործոնի, նոր մեթոդի կիրառմամբ, մյուսում՝ ավանդական մեթոդով: Առաջին դասարանն անվանում են

փորձարարական, իսկ երկրորդը՝ ստուգողական: Գծապատկերում  $\Phi$  և  $U$  տառերով նշանակված են համապատասխանաբար փորձարարական և ստուգողական դասարանները:



փորձարարական գործոնը՝ մեր դեպքում Գուս-ի աղյուսակը, , Վենի դիագրամը, Խճանկար, Պրիզմ և 6-րդ փուլում հաշվվում է փորձարարական և ստուգողական դասարանների վերջնական մակարդակը ստուգողական աշխատանքի միջոցով:  $K_{\phi}$ -ով և  $K_u$ -ով նշանակված են դասարանի միջին ցուցիչները ստուգող գիտափորձի վերջում:

5-րդ փուլում երկու դասարանների գիտելիքների և կարողությունների մակարդակները բնութագրող վերջնական ցուցիչներից հանում են սկզբնական ցուցիչները՝

$$E_{\phi} = K_{\phi} - H_{\phi} \qquad E_u = K_u - H_u$$

որտեղ  $E_{\phi}$ -ն և  $E_u$ -ն փորձարարական և ստուգողական դասարանների ուսուցման արդյունավետությունը բնութագրող միջին ցուցիչն է:

6-րդ փուլում հաշվվում է փորձարարական գործոնի համեմատական  $E$  արդյունավետությունը՝

$$E = E_{\phi} - E_u$$

Արդյունքները

- $H_{\phi} = 6$
- $H_u = 6$
- $K_{\phi} = 7.7$
- $K_u = 6.5$
- $E_{\phi} = K_{\phi} - H_{\phi} = 1.7$
- $E_u = K_u - H_u = 0.5$
- $E = E_{\phi} - E_u = 1.2$

Այսպիսով, նոր գործոնի արդյունավետությունը  $E = 1.2$  :

## **Եզրակացություն**

«Հարավային Ամերիկա» թեմայի ուսուցման խորացված մեթոդիկա մշակելիս մենք ցուցաբերեցինք ավանդական և ոչ ավանդական մեթոդների համալիր մոտեցում: Ընդունելով մեկը և բացառելով մյուսը՝ մենք մեծ սխալ կգործեինք, քանի որ թե՛ ավանդական, թե՛ ոչ ավանդական մեթոդները ուսուցման մեթոդիկայի մեջ իրենց ուրույն տեղն ունեն:

«Հարավային Ամերիկա» թեմայի ուսուցման համար մեր քննարկված մեթոդները թերևս ունեն իրենց դրական ազդեցությունը, սակայն նշված մեթոդները միանշանակ կերպով ընդունելը նույնպես ճիշտ չի լինի: Յուրաքանչյուր ոչ ավանդական դաս պետք է ստեղծագործական բնույթ ունենա: Ամեն դասի համար մեթոդիկա մշակելիս պետք է հաշվի առնել դասարանի աշակերտների առանձնահատկությունները: Անգամ միևնույն դասի ուսուցման

համար տարբեր դասարաններում պահանջվում է տարբեր մեթոդների զուգակցում:

Մեր աշխատության ժամանակ օգտվել ենք ավանդական մեթոդներից՝ պատմելու մեթոդից, պրոբլեմային ուսուցումից, իսկ ոչ ավանդական մեթոդներից (Մտազրոհ , Գուս-ի աղյուսակ «Շրջագայությունն պատկերասրահում» Խճանկար, Վենի դիագրամ,Պրիզմա), որոնք պահանջում են սովորողների ակտիվ մասնակցություն և ապահովում են դասի ժամանակ նոր նյութի մեծ քանակության ուսուցում:

Ամեն դեպքում, յուրաքանչյուր ուսուցչի նպատակը մեկն է. չնայած, որ դասավանդումն ու ուսուցումը տարբեր գործընթացներ են, դասավանդմանը պետք է հետևի ուսուցումը, և յուրաքանչյուր աշակերտի սովորածը պետք է լինի այնքան հիմնավոր, որ այդ գիտելիքները նրանք մշտապես կարողանան օգտագործել:

## **Գրականություն**

1. Սարգսյան Խ. Բ., Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա 4, Երևան, 2002, «Ձանգակ-97» :
2. Յովսեփյան Ա., Գրիգորյան Ա. «Աշխարհագրություն 6» ուսուցչի ձեռնարկ, Երևան, Աստղիկ Գրատուն,, 2013:
3. Յովսեփյան Ա., Գրիգորյան Ա., Մանասյան Մ. Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն 6-րդ դասարան, Երևան, Աստղիկ Գրատուն, 2013:
4. Յովհաննիսյան Գ. Իսկանդարյան Մ. «Աշխարհագրություն 6» ուսուցչի ձեռնարկ, Երևան «Լույս »2007:



5. Հանրակրթության պետական կրթակարգ. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ ,Անտարես, Երևան,2004:
6. Չոիրաբյան Ա. ,Հովհաննիսյան Գ. , և ուրիշներ, Կառուցողական ուսուցման հիմունքները և մեթոդները. Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՌԵՔՍ, 2004:
7. Ա. Հովսոփյան, Գ . Հովհաննիսյան, Մ. Մանասյան, Ռ. Մարգարյան «Աշխարհագրություն 7-8» ուսուցչի ձեռնարկ Երևան «Մանմար »2013:
8. Ա. Արնաուդյան, Ս. Խաչատրյան, Ա. Գյուլբուդադյան, Ս. Խրիմյան, Մ. Պետրոսյան «Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար » Կրթության ազգային ինստիտուտ 2004թ
9. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006